և կաւային կարմիր մոխրագոյն և սպիտակ աւազախառն լերինս, ընդարաջ լինի քաղաքաւանն Պէյփազար 'ի լեռնամէջս. 1800 տունք հաշուին նորա, ամենեքեան անկղմինար և անհող, տախտակաւ միայն յարկեալ, և համայն տաճկաբնակ։ Անուանի են պարտէզքն սեխենեաց. այլ երևելի բերք նորա այծամազ փափուկ։

Այլ, աւան 'ի լեռնամէջս բնակեալ 'ի Ցաճկաց 'ի 600 տանց։ Բերք նորին այծամազ փափուկ. ունի բաղանիս բնական ջուրց չինեալ 'ի բարձրահայեաց վայրի արտաքոյ քաղաքին, 'ի վերայ միոյ 'ի լերանցն՝ յորոց շրջապատեալն է։

Բնական օդերևոյթ մը.

Հողագործք՝ մանաւանդ այգեգործք, գիտեն սառուցին ըրած անտանելի ցնաները, որ հովիտներու մէջ աւելի սաստիկ կ'ըլլայ։ Ինչու համար հովիտք դաշտերէն աւելի կը ցնաուին։ —

Ոմանք յօդաքնին գիտնականաց կ'ըսեն թէ գիշերային ճառագայթմունքէն (գղ. rayonnement) հովիտք աւելի ջերմութիւն կը կորսնցրնեն քան թէ դաշտք. յետ պարզ գիշերոյ մը շատ անգամ ջերմաչափն աւելի վար կ'իջնէ ձորոց մէջ քան թէ չորս կողմի բարձրաւանդակաց. և շատ հեղ կը հանդիպի որ դաշտավայրի բոյսք չեն ցնաուիր եղեամէն, մինչդեռ հովտաց բոյսերն բոլորովին կը սառին։

Ուրիշ գիտնական մը պատճառ այս զուգահառնութեան տարբերութեանը՝ որ չորսէն ինչուան հինգ աստիճան կը հասնի, կը սեպէ ձորերուն աւելի քիչ ատեն արև տեսնելն քան մերձակայ տափերուն։

Ոմանք ալ այս երևոյթս ուրիշ կերպով կը մեկնեն, և կ'ըսեն.

Փորձուած է որ գիշերային ճառագայթմունքէն կորսուած ջերմութեան քանակութիւնն՝ ուղիղ համեմատութիւն ունի այն ճառագայթարձակ մակերևութին՝ հակադիր երկնքին տարածութեանը հետ. այս ալ յայտնի է որ ցորեկն հովտաց մէջ աւելի տաք կ'ընէ քան դաշտաց։

Արդ ինչէն է այս զուգահառնութեան տարբերութիւնը ձորերու մէջ։ —

Ակնէց է, որ դաշտի մէջ գետնին ամէն մէկ կէտն հաւասարապէս ճառագայթելով՝ հաւասարապէս ալ կը պաղի. իսկ ձորոյն մէջ թէպէտ նուազ կ'ըլլայ ճառագայթումն, բայց բլրին դագաթին վրայ պաղած օդն պաղելով և ծանրանալով 'ի հարկէ վար կ'իջնէ և հոն կը դիզուի. (որովհետև ընդհանրապէս գիշերը օդն աւելի խաղաղ ըլլալով՝ սաստիկ կ'ըլլան ճառագայթումն՝) ցօղն ու եղեամն։ Ընդ հակառակն բարձրաւանդակ տեղ քիչ շատ միշտ մթնոլորտին մէջ շարժմունք մը ըլլալով՝ գետինը շօշափող պաղած օդը վերի օդին հետ կը խառնէ. լեռնակի մը կոգը պայծառ գիշերուան մէջ անընդհատ կը տաքնան վերէն իջած օդէն՝ որ կը ծածկէ զանիկայ իբրև շարժուն վերարկու մը, և քանի որ կամաց կամաց լերան կողից շփուելով տաքութիւնը կորսընցնէ՝ երթալով վար կ'իջնայ և կը դիզուի լերան ստորոտը։

Այս կերպով կոնաձև բլուր մը, թէպէտ և գիշերը համեմատութեամբ աւելի շատ ճառագայթած ըլլայ քան թէ ձորահովիտ մը կամ խոր յատակ մը, առաւօտեան դէմ աւելի տաք կ'ըլլայ քան զհովիտն։

Այս բանս երկրագործութեան վերաբերելով, կ'ըսենք թէ որովհետև հովտա-

ձև տեղերը ցորեկ ատեն աւելի ջերմութիւն կ'ընդունին՝ քան թէ բարձրաւանդակներն, ուրեմն գարնան ատեն բոյսերն հոն աւելի կ'աճին՝ խոնաւութիւնն ու ցօղն սաստիկ ըլլալով. և թէ որ անձրև մը գայ՝ ջրոյ կաթիլներն տերևներուն վրայ և ծառի բողբոջից վրայ աւելի կը մնան, վասն զի օդն հոն հանդարտ ըլլալով և շոգիով ծանրացած՝ խիստ քիչ կը ցնցէ և քիչ թացութիւն կը ծծէ. որով և աւելի ջնասակար կ'ըլլայ եղեամն, մանաւանդ եթէ առաւօտն աղէկ արև մ'ըլլայ, և այն խորաձոր տեղերը յանկարծ ծագի. ճառագայթներն այն մանր ցօղոյ կաթիլներուն մէջ զարնելով՝ շուտ մը կը տաքցընեն անբաւ կորնթարդ բիւրեղներու նման, և կը խանգարեն նորաբողբոջ բոյսերը, կ'այրեն ու կը փճացընեն։

Այս բանս փորձուած է Գաղղիոյ վիէն և Մէօզ գետոց հովտաց ընկուզենեաց վրայ, որ ամէն տարի կը սառին. գլուխնին կանաչ է, վարի ճիւղերն սեւ ու խանկրած. տեղացի Դուռանժոյ այգեգործք գիտնալով այս մթնոլորտին ազդեցութիւնը՝ կը զգուշանան իրենց տունկերը այնպիսի տեղեր բաց դնելու։

Ատուռաճ աղբիւր լուսոյ և զօրութեան։

Գիշերախառն յարուցեալ որպէս զԴաւիթ դիտել զերկինս, զինչ էր զոր տեսի, ո՛վ Ցէր. և քանի՛ զանչելահրաշ պատկեր էր այն անհուն լուսոյդ։ Գալով գայր արեգակն և երկնաձիր պայծառութիւն ծաւալեալ շուրջանակի կարապետ լինէր գալստեան նորա. վերացան աստեղք, բայց կանգուն կայր դեռ լուսին 'ի մահիկս արծաթի դեղանի և լուսաբորբոք, կղկաթ կաթոգի զաչս յինքն յափշտակեալ. ուրանօր գոգցես մեծարանս իմն կամեցեալ առնել ելիցն արևու՝ կայր զերեսս իւր 'ի նա հաստատեալ ջինջ և պայծառափայլ. և կիսաբոլորն այն փոքրիկ պարունակ 'ի կողմն այն և եթ հիւսքանչ և ճաճանչաւէտ փայլէր 'ի ճառագայթարձակ նշուլիցն արփենւոյն՝ իբրև 'ի հօրէն լուսոյ, այլոցն ամենայնիւ մռայլ գոլով և խաւար։

Ըստ առաւելահրաշ լուսոյ պայծառութեանն փառաւոր առնէ նա զպարգևատուն առատահոս. նա աւանիկ այլ իմն ազգ այսպէս շուք դնէր երկնաւոր լուսատուին. զի ըստ մօտել արեգականն գողանայր զինքն յաչաց, և մահիկ եղջերն տակաւ նուազեալ կարճատէր. մինչ զի ընդ լուսալիր ծագել արփենոյն՝ ըստ ակն անկեալ թարշամ և չիջանուտ լուսոյն՝ իբրև խորասուզեալ իմն կորնչել ընդ մեծաջահ աստեղն նշուլիւք։

Այլ զի ոչ ճեաց նա թափուր 'ի լուսոյ մօտագոյնս մերձեցելոյ արեգականն լուսատուի, այն յայտ իսկ էր. զի աստղ դուզնաքեայ տեղի տայր վեհագունին, և նշոյլ ամօտաջահ խառնէր 'ի լոյս մեծապայծառ, և մահիկ լուսնին որ գեղայօրէն նախ փայլէրն 'ի մէջ աստեղայ, անհետանայր 'ի յերկնից։

Աստուած իմ, լոյդ յաւիտենական, ո՞չ այս առակ օրինակի իցէ հանգունատիպ այնմ որ 'ի հոգիս իմ ներգործի առ 'ի քէն լուսաւորելոյ. անդուստ ուրանօր ակնարկեսդ սպիտակափառ փայլէ, իսկ ուր ուրեք ոչ թափ անցանեն ճառագայթք քոյին՝ տիրէ անդ մռայլ. այլ թէ երբեք բովանդակ զլոյդ ամփոփեացես, անհնարին անդ 'ի վերայ հասանէ խաւար և գայթակղութիւն..։ Լոյդ անճառելի, որում համայն վերընծայել պարտիմք միայնոյ պարգևատուիդ՝ որ ես արդարև հայր լուսոյ, ոչ լոկ զլոյս մեր և զշնորհս, այլ և առնել իսկ զի լոյս մեր՝ որպէս ինչ և էն, ընկալցի 'ի լոյս քոյ, և բարձցի և կորիցէ յանդիման աչաց քոյ։

Պոսիւ.